

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ

Բժշկական օգնության քաղաքականության ուղղությամբ՝

- ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ներառված մի խումբ անձանց համար պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հասանելի են դարձել նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող մի շարք բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:
- 2019 թվականի հունվարից ախտորոշված չարորակ նորագոյացություններով հիվանդների վիրահատական բուժումը ամբողջ բնակչության համար իրականացվում է անվճար:
- 2019 թվականի հուլիսից հաստատված չարորակ ուռուցքաբանական և արյունաբանական ախտորոշումներով պացիենտների համար ճառագայթային բուժումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում անվճար պայմաններով՝ ամբողջությամբ բնակչության համար:
- Ընդլայնվել են ՀՀ ամբողջ բնակչությանը պետական պատվերի շրջանակներում անվճար պայմաններով մատուցվող սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունները:
- 2019թ. փետրվար ամսից առողջապահության նախարարությունն իրականացնում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով գլխուղեղի սուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիայի ծրագիրը՝ ամբողջ բնակչության համար, որի շրջանակներում բուժօգնություն է ստացել շուրջ 385 քաղաքացի:
- Առողջապահության նախարարի 2019թվականի մարտի 12-ի թիվ 611-Ա հրամանով Հայաստանում ներդրվել է սանիտարական ավիացիայի ծառայություն, որի նպատակն է հեռավոր մարզերում բնակչությանն առավել որակյալ շտապ բժշկական օգնության կազմակերպումը՝ պացիենտի ուղղաթիռով տեղափոխումը և Երևանի առաջատար բժշկական կենտրոններում մասնագիտացված բժշկական օգնության կազմակերպումը: 2019 թվականի ապրիլի 8-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ծառայության կողմից հեռավոր բնակավայրերից տեղափոխվել է 82 պացիենտ:

Մոր և մանկան առողջության պահպանման ուղղությամբ՝

- 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման մեջ կատարվել է փոփոխություն՝ սույն թվականի հուլիսի 4-ից պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացվում է մինչև 18 տարեկան երեխաներին, անկախ սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերից, որի շնորհիվ առկա է երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մատչելիության զգալի բարելավում:
- Առողջապահության նախարարի 2019 թվականի հուլիսի 17-ի N1961-Լ հրամանով հաստատվել է «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բուժօգնության և խնամքի կազմակերպման կարգը»:
- Մշակվել և առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 13-ի N 2525-Լ հրամանով հաստատվել են մանկական հիվանդանոցային ծառայությունների բնութագրիչները և գնահատման չափանիշները՝ ըստ մակարդակների: Մշակված

հարցաթերթիկով գնահատվել են Երևանի և ՀՀ մարզերի բոլոր այն բժշկական հաստատություններում, որոնք իրականացնում են երեխաների հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում:

-Մշակվել և առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 2674-Լ հրամանով հաստատվել է «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը»:

- Մշակվել և առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 7-ի N 2860-Լ հրամանով հաստատվել է «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների առողջության առաջնային պահպանման (այսուհետ, ԱԱՊ) բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը»:

-Ի կատարումն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 19-ի N 650 -Լ որոշմամբ հաստատված կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի «Մոր և մանկան, առողջության բարելավում, վերարտադրողական ներուժի ավելացում, ծնելիության անկման տեմպերի նվազեցում» 26-րդ կետի 26.1 ենթակետով սահմանված միջոցառման, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1048-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն 2015 թվականի մայիսի 27-ի N 568-Ն որոշման մեջ, համաձայն որի սեպտեմբերից մեկնարկել է անպտղություն ունեցող զույգերին աջակցող ծրագիրը, որով սահմանվել են անպտղության բուժման և հաղթահարման նպատակով պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հետազոտությունների և բուժման, այդ թվում՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման ծավալները:

-Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի «Ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ ուղեգրման կարգը և ըստ բժշկական կազմակերպությունների մակարդակների հղիների/ծննդաբերների ուղեգրման և հոսպիտալացման բժշկական ցուցումներն ու պայմանները հաստատելու մասին» և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 20 մայիսի 2013 թվականի N 1371-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի փետրվարի 4-ի N 256 - Ա հրամանը:

-Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի 06.02.2019թ. «Նորմալ և բարդության տարբեր աստիճանների ծննդաբերությունների ու կեսարյան հատումների բնութագրերը հաստատելու մասին և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 08 օգոստոսի 2012 թվականի N 1816-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 285-Ա հրամանը:

-Երևան քաղաքի 3-րդ մակարդակի ծննդօգնության բժշկական կազմակերպությունների կողմից մարզերի ծննդօգնություն բժշկական կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության, կլինիկական ուղեցույցների ներդրման աջակցման, «մազից կախված դեպքերի» քննարկման նպատակով այցեր իրականացնելու նպատակով հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 24-ի «Մարզերի բժշկական կազմակերպությունների մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներին և ծննդատներին կցվող 3-րդ մակարդակի ծննդօգնության բժշկական կազմակերպությունների ցանկը հաստատելու

մասին» թիվ 3100- Ա հրամանը, որը ներկայացվել է համապատասխան բժշկական կազմակերպություններին և մարզպետարաններին:

-Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի «Պտղի ներարգանդային զարգացման արատների/անկանոնությունների ախտորոշման և վարման հարցերով մասնագիտական խմբեր, կենտրոնական հանձնաժողով ստեղծելու, դրանց կազմը հաստատելու և պտղի ներարգանդային զարգացման ախտահարումների ախտորոշման և վարման մասնագիտական կոնսիլիումի ու կենտրոնական հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման կարգը հաստատելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 3257 – Լ հրամանը:

-«Պտղի սրտի ծրագիր» ներդնելու շրջանակներում «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից մարզերում իրականացվել են հանդիպումներ մանկական սրտաբանների և մանկաբարձ-գինեկոլոգների հետ:

-ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ, «Տղաների նախընտրության և աղջիկների թերաթևորման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում, մարզերի մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների մանկաբարձ-գինեկոլոգների և սոնոգրաֆիստների համար կազմակերպվել են 1-օրյա դասընթացներ:

- Պետական պատվերի շրջանակներում իրականացվում է հաշմանդամ երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնությունը, վերականգնողական և առողջարանային բուժումը, դժվարամատչելի հետազոտությունների իրականացումը և դեղերով ապահովումը: Ընդ որում, 2019թ. պետական բյուջեի հաշվին իրականացվել է հաշմանդամ երեխաների առողջարանային բուժում՝ «Արարատ» մոր և մանկան առողջարանում՝ 158 երեխա, և Ապարանի առողջարանային ճամբարում՝ 123 երեխա, որոնց զգալի մասը՝ խնամողի ուղեկցությամբ, ընդ որում 2019թ. նոյեմբերից առողջարանային պայմաններում անհատական խնամքի կարիք ունեցող երեխաների խնամողների սննդի և կեցության ծախսերը ապահովվել են, անկախ ընտանեկան նպաստների համակարգում նրանց ներգրավվածությունից: Նախարարի N 3462-Լ հրամանով հաստատվել է «Երեխաների վերականգնողական բուժման բարելավման միջոցառումների ժամանակացույցը», համաձայն որի նախատեսվում է ծառայությունը կանոնակարգող մի շարք փաստաթղթերի մշակում և նոր մարզային վերականգնողական կենտրոնների ստեղծում:

- Նպատակային ծրագրի շրջանակներում Առողջապահության նախարարության, «Արաբկիր» Միացյալ մանկական հիմնադրամի և «Արաբկիր» ԲՀ - ԵԴԱԻ փորձագետների կողմից կատարվել է Հայաստանում գործող մանկական վերականգնողական ծառայությունների կարողությունների արագ գնահատում, գործող ծառայությունների քարտեզագրում, ոլորտի հիմնախնդիրների վերհանում, ՖՄԴ (ICF) հիման վրա երեխաների զարգացման խանգարումների գնահատման, դասակարգման և վարման համար մի շարք գործիքների մշակում, ծառայությունների բարելավման նպատակով առաջարկությունների փաթեթի պատրաստում: Փաթեթը ներկայացվել է կլոր սեղանին շահագրգիռ գերատեսչություններին, մասնագիտական կառույցներին և հասարակական կազմակերպություններին:

- Շարունակաբար իրականացվում են բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի, տեսողության, լսողության, սրտի բնածին արատների վաղ հայտնաբերմանն ուղղված սկրինինգային ծրագրերը: Նոյեմբերի 20-ի տվյալներով բնածին հիպոթիրեոզի սկրինինգի շրջանակներում իրականացվել է 31.854 հետազոտություն, հայտնաբերվել է 12 երեխա, որոնք վերցվել են դիսպանսերային հսկողության և ստանում են հորմոնալ հետազոտություն, ֆենիլկետոնուրիայի սկրինինգի շրջանակներում իրականացվել է 31.854 հետազոտություն, հայտնաբերվել է 4 երեխա, որոնք ստանում են ֆենիլալանինից

զուրկ հատուկ սնունդ, լսողության սկրինինգի շրջանակներում իրականացվել է 29982 հետազոտություն, հայտնաբերվել է ծանրալսությամբ 25 երեխա, որոնք վերցվել են հսկողության՝ լսողության պրոթեզավորման կամ կոխլեար իմպլանտացիայի նպատակով:

- 2019թ հունվարի մեկից մինչ դեկտեմբերի մեկը իրականացվել է անհասության ռետինոպատիայի ընդհանուր առմամբ՝ 3243 սկրինինգ (առաջնային և շարունակական սկրինինգ անցած երեխաների ընդհանուր թվաքանակը՝ 1.100), 12 նորածինն կատարվել է լազերային միջամտություն, հակաանգիոգեն ներարկում ստացել են 12 երեխա, վիրտեոռետինալ և հարակից վիրահատություն կամ այլ միջամտությունների անցած երեխաների քանակը՝ 6:

- 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում արձանագրվել է մանկական (0-1 տարեկան) և մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշների կրճատում: Համաձայն Ազգային Վիճակագրական Կոմիտեի հրապարակած տվյալների, մանկական (0-1 տարեկան) մահացության ցուցանիշը կազմել է 6,4% (բացարձակ թիվը կազմում է 170 դեպք)՝ 2018թ. նույն ժամանակատվածի 7,5% (բացարձակ թիվը կազմում է 198 դեպք) համեմատությամբ: Համապատասխանաբար կրճատվել է նաև 0-5 երեխաների մահացության ցուցանիշը, 2019թ. 9 ամսվա կտրվածքով կազմելով 8,0% (բացարձակ թիվ՝ 213), 2018թ. նույն ժամանակահատվածի 9,1% (բացարձակ թիվ՝ 241) համեմատությամբ:

Հանրային առողջապահության ուղղությամբ՝

- «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» և մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի փաթեթը անցել է Ազգային ժողովում առաջին ընթերցումը:

- Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի վերաբերյալ իրականացվել է հանրային իրազեկման արշավ:

- ՀՀ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված կրթական ծրագրերի մշակման խումբը մասնակցել է Հանրակրթության Պետական չափորոշիչների մշակման և «առողջ ապրելակերպ» թեմայի տարբեր առարկաներում ինտեգրման աշխատանքներին:

Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրի շրջանակներում Կրթության և գիտության նախարարության մասնագետների հետ համատեղ Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի թվով 276 առողջ ապրելակերպ դասավանդող ուսուցիչ վերապատրաստվել է առողջ ապրելակերպի, ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների՝ անառողջ սնուցման, ցածր ֆիզիկական ակտիվության, ծխախոտի, ալկոհոլի օգտագործման կանխարգելման հիմնահարցերով:

- Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի կողմից իրականացվել է «Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագիծ» ազգային հետազոտություն ՈՎՀ-ի կանխարգելման և պայքարի գործում ներդրումներ կատարելու տնտեսական վերլուծության նպատակով գնահատվել է ՈՎՀ տնտեսական բեռը, ՈՎՀ-ի կանխարգելման համար անհրաժեշտ մի շարք միջոցառումների ֆինանսավորման ծավալները: Գնահատման արդյունքներն ամփոփված են «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը Հայաստանում Ներդրումները հիմնավորող փաստարկներ» զեկույցում:

- Մշակվել և հաստատվել է առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 27-ի «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1387 – Լ հրամանը:

- ԱՊՀ գործադիր կոմիտեի կողմից համատեղ կազմակերպվել է «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության դեմ պայքար» թեմայով ԱՊՀ երկրների 2-օրյա աշխատաժողով, որի ընթացքում մշակվել է Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության դեմ պայքարի ԱՊՀ գործողությունների պլան:

- Մշակվել և առողջապահության նախարարի հրամաններով հաստատվել են «Հակաբիոտիկների նշանակման խմբերը և ընտրության չափանիշները հաստատելու մասին» առողջապահության նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի թիվ 1529-Լ հրամանը, ինչպես նաև մի շարք այլ իրավական ակտեր:

- Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Հակաբիոտիկների մասին իրազեկման» համաշխարհային շաբաթվա շրջանակներում կազմակերպվել է «Հակամանրէային դեղեր. Կիրառել՝ պատշաճ» խորագրով քարոզարշավ:

- Կանոնակարգվել է վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության ոլորտը, մշակվել և հաստատվել է շուրջ 22 իրավական ակտ՝ կառավարության որոշումներ, համատեղ հրամաններ, սանիտարական կանոններ և նորմեր, մեթոդական ուղեցույցներ, գործընթացային ստանդարտ ընթացակարգեր, ձեռնարկներ, կարգեր:

- ԱՀԿ-ի աջակցությամբ CDA Foundation կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում իրականացված ՀՀ-ի բնակչության շրջանում հեպատիտների բեռի գնահատման արդյունքների վերաբերյալ ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակվել և սահմանված կարգով հաստատվել է Առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 27-ի «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1387-Լ հրամանը:

- ՀՀ 119 ստացիոնար բուժօգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացվել է վարակի հսկողության բաղադրիչների գնահատում՝ ԱՀԿ-ի IPCAF գործիքով: 2019 թվականի ընթացքում բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելման հարցերով վերապատրաստվել է 103 բժշկական կենտրոնների թվով 852 բուժաշխատող:

Դեղորայքային քաղաքականության ուղղությամբ՝

- 2019 թվականի համար պետական բյուջեով ձեռք է բերվել թվով 14 անվանում հակառուտոցքային դեղեր՝ մանկական քիմիոթերապիայի համար:

- Դեղերի օրենքից բխող 8 իրավական ակտ է ընդունվել, որոնց միջոցով կարգավորվում են դեղերի ներմուծման և արտահանման, գրանցման, կլինիկական հետազոտությունների, հետ կանչի և շրջանառության դադարեցման, պատշաճ արտադրական գործունեության և այլ մեխանիզմները:

- Մեկնարկել է դեղերի կողմնակի ազդեցությունների հաղորդման բջջային հեռախոսի հավելվածը: Դեղազգոնության համակարգում անկյունաքարային գործունեությունը դեղերի կողմնակի ազդեցությունների հավաքագրումն է: Տվյալներն օգնում են բացահայտել դեղերի անվտանգությանը վերաբերող խնդիրները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ նպաստելով

հանրային առողջության պահպանմանը և դեղաբուժության շրջանակներում պացիենտի անվտանգության ապահովմանը:

- Մինչ այժմ պետական միջոցներով չտրամադրված Հեպատիտ Ց-ի բուժման համար անրիաժեշտ հակավիրուսային և հիպոֆիզային գաճաճություն ախտանիշ ունեցող աճի հորմոն դեղերը 2020 թվականից կհատկացվեն անվճար՝ համաձայն ՀՀ կառավարության 30.05.2019 թվականի թիվ 642-Ն որոշման:
- Մոտ 400 անուն դեղ, որոնք անհասանելի էին անապահով ընտանիքների համար՝ 2019 թվականի հուլիսի 1-ից տրամադրվում են անվճար: Այս արտոնությունից օգտվում է մոտ 200 հազար շահառու՝ համաձայն ՀՀ կառավարության 30.05.2019 թվականի թիվ 642-Ն որոշման:
- Մեկնարկել է հեպատիտ Ց-ի ախտորոշման և բուժման ծրագիրը: Վիրուսային հեպատիտների կանխարգելման և դրանց դեմ պայքարն առավել համակարգված և արդյունավետ դարձնելու նպատակով սահմանվել են շահառուների շրջանակը, իրականացման փուլերը և ընթացակարգը:
- Կառավարությունն ընդունել է «Դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) կարգը, դեղատոմսերի ձևերը, ինչպես նաև դեղերի և դեղանյութերի հաշվառման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագիծը, որով դեղատոմսով պետք է բաց թողնվեն հետևյալ դեղային խմբերը՝ հսկվող դեղերը և դեղանյութերը (թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող), անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող, ինչպես նաև համակարգային ազդեցությամբ հակավարակային դեղերը (հակաբակտերիային, հակասնկային, հակամիկոբակտերիային, հակավիրուսային դեղերը, իմունային շիճուկները և իմունոգլոբուլինները, պատվաստանյութերը), ինչպես նաև միզապրոստոլ պարունակող դեղերը:
- Կառավարության նիստում հավանության է արժանացել առողջապահության նախարարության կողմից ներկայացված առաջարկը: Փոփոխություն կատարելով «Հայաստանի Հանրապետության կարիքների համար դիաբետոն 60 մգ դեղի գնման 2015-2019 թվականների գործընթացը կազմակերպելու մասին» որոշման մեջ՝ 2 տարի ժամկետով երկարաձգվել է Դիաբետոն 60 մգ դեղի գնման գործընթացը: Այսպիսով, Շաքարային դիաբետոսով հիվանդները 2020-2021 թվականներին ևս պատշաճ կերպով և անխափան կապահովվեն ֆրանսիական «Լե Լաբորատուաղ Սեդլիե» ընկերության արտադրության «Դիաբետոն ՄՌ 60-ի (գլիկլազիդ)» դեղով:
- Հայաստան-Արցախ» հիմնադրամն առողջապահության նախարարությանը նվիրաբերել է ombitasvir/paritaprevir/ritonavir+dasabuvir (3D) դեղերը, որոնք նախատեսված են քրոնիկական հեպատիտ Ց-ի գենոտիպ «1b»-ով պացիենտների բուժման համար: Դեղերն անվճար տրամադրվում են հակավիրուսային բուժման կարիք ունեցող հիվանդներին՝ բժշկի կողմից տրված դեղատոմսի հիման վրա:

Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության կազմակերպման ուղղությամբ՝

- Մասնակցություն Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունեցած արտակարգ իրավիճակների (ավտովթարներ) արդյունքում տուժած ՀՀ քաղաքացիների բժշկական օգնության և սպասարկման, տեղափոխման կազմակերպչական հարցերով ձևավորված պատվիրակության կազմի աշխատանքներին, հանրային առողջության անվտանգության ապահովման հնգամյա գործողությունների ազգային պլանի (National Action Plan on Health Security (NAPHS)) գործարկման աշխատանքներին, Հանրային առողջապահական սպառնալիքների հետ կապված ռիսկերի ռազմավարական գնահատման աշխատանքներին, բնական աղետների կառավարման, արագ արձագանքման բժշկական թիմերի, Քիմիական զենքի կոնվենցիայի և քիմիական ապահովության և անվտանգության կառավարման, կենսասահաբեկչության և

կենսասանվտանգության վերաբերյալ մի շարք միջազգային վարժանքին, Առողջապահության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության և Պաշտպանության նախարարության համապատասխան մասնագետներից բաղկացած պատվիրակության կազմով ՌԴ-ում կայացած «Լայնամասշտաբ երկրաշարժի դեպքում տուժածներին շտապ բժշկական օգնության տրամադրման և բժշկական տարհանման կազմակերպում» թեմայով հրամանատարաշտաբային զորավարություններին:

- Մասնակցություն «Հարավարևելյան և Արևելյան Եվրոպայի տարածաշրջաններում փորձաքննության կարողությունների, քրեական բնույթի ճառագայթային, քիմիական և կենսաբանական միջադեպերի հետաքննության վերաբերյալ» 57 ծրագրի շրջանակներում **առցանց կոնֆերանսի** ձևաչափով տեղի ունեցած Հայաստանի և Վրաստանի գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ միջտարածաշրջանային շտաբային վարժանքին, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ՝ հավաք-պարապմունքներին: Առողջապահության նախարարության ղեկավար կազմի և անձնակազմի հետ վարժանքների կազմակերպում և իրականացում համաձայն տարեկան պլանների:

Քաղաքացիների հետ կապի, բողոքների գրանցման և թեժ գծի ուղղությամբ՝

- Առողջապահության նախարարության «Թեժ գիծ» ծառայությունը 2019 թվականին գրանցել է 58045 հեռախոսազանգ, որից 2163-ը՝ բողոք: 2018 թվականի (47301 հեռախոսազանգ, 2242 բողոք) համեմատությամբ այն աճել է 23%-ով:

- Քաղաքացիների դիմումների և բողոքների արագ արձագանքման բաժնում 2019 թվականին գրանցվել է 3591 դիմում-բողոք, hotline@moh.am էլեկտրոնային հասցեին ուղղված 154 նամակ, հարցումներ, բաժին է այցելել թվով 69 քաղաքացի, որոնց տրվել են պարզաբանումներ և անհրաժեշտ լուծումներ՝ բարձրացված հարցերի վերաբերյալ:

Քաղաքացիներից և շահագրգիռ այլ մարմիններից ստացված գրությունների ուղղությամբ՝

- 2019թ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարություն մուտքագրվել է թվով 38946 գրություն, որից 10870-ը (կամ 27.9%) քաղաքացիներից (ընդ որում՝ 5393-ը կամ 49.6%-ը անվճար բուժման կամ դեղապահովման վերաբերյալ):

- Ժամկետային փաստաթղթերի, հանձնարարականների կատարման ուղղությամբ 2019թվականի ընթացքում էական ուշացումներ չեն գրանցվել: ՀՀ առողջապահության նախարարությունից ելքագրվել է 24848 գրություն:

Բժիշկների մասնագիտացման, վերապարաստման և կադրային հագեցվածության ուղղությամբ՝

- 2019 թվականին իրականացված նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագրով ԵրՊԲՀ է ընդունվել 32 կլինօրդինատոր մարզերում ամենապահանջված մասնագիտություններով, որոնք ուսումնառության ավարտին աշխատանքի կնշանակվեն մարզային առողջապահական կազմակերպություններում:

- ՀՀ առողջապահության նախարարության միջնորդությամբ մարզերում աշխատանքի է նշանակվել նպատակային կլինիկական օրդինատուրայի 36 շրջանավարտներ:

- Պետպատվերով վերապարաստվել է սոցիալական աջակցության կարիք ունեցող 150 ավագ և 200 միջին բուժաշխատող՝ գերազանցապես մարզերում աշխատող:

- Ավագ բուժաշխատողների ժամանակավոր գործողումների ծրագրի ներդրման արդյունքում, 2019թվականի երկրորդ կիսամյակում մարզերի բժշկական կազմակերպություններ են գործողվել 25 բուժաշխատող:

- Իրականացվել են լայնածավալ աշխատանքեր առողջապահության բնագավառի մասնագիտությունների ցանկի արդիականացման և բժիշկ-մասնագետների որակավորման բնութագրերի ստեղծման ուղղությամբ:

Առողջապահության ոլորտում լիցենզավորման ուղղությամբ՝

- 2019 թվականին գումարվել է թվով 33 լիցենզավորման նիստ, ինչի արդյունքում տրվել է շուրջ 408 կազմակերպության դրական եզրակացություն և 197 կազմակերպության բացասական, որոնցից 106 հայտատուի մոտ չի իրականացվել տեղում ուսումնասիրություն, ինչպես նաև կասեցվել է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից կասեցման ներկայացված դեղատնային գործունեության իրականացմամբ զբաղվող 136 կազմակերպությունից 32-ը և բժշկական օգնության և սպասարկման իրականացմամբ զբաղվող 226 կազմակերպությունից 76-ը: Այլ վայրում ևս տրամադրվել է 185 լիցենզիա:

- Դեղատնային գործունեության իրականացմամբ զբաղվող կասեցված 32-ից հրամանն ուժը կորցրած է ճանաչվել 29-ը, իսկ բժշկական օգնության և սպասարկման իրականացմամբ զբաղվող 76-ից 15-ն ուժը կորցրած է ճանաչվել, 27-ը մասնակի մասնակի ուժը կորցրած է ճանաչվել:

- Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ ՀՀ կառավարության սահմանած՝ դրանց պրեկլուսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի գործունեության իրականացում-11:

- Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ ՀՀ կառավարության սահմանած՝ դրանց պրեկլուսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի գործունեության իրականացման երկարաձգում-3:

- Նախկինում լիցենզավորված կազմակերպություններից 11-ը վերածնակերպվել են, 40-ը՝ հասցեափոխվել են, 23-ի գործունեությունը կասեցվել է, 215-ի գործունեությունը դադարեցվել է:

- Լիցենզավորված կազմակերպությունների տնօրենների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված դիմումների համաձայն կասեցվել է 23 լիցենզիայի գործողություն, դադարեցվել 215-ը:

- Ստացվել է գովազդի թույլտվության թվով 106 հայտ, որից 80-ը բավարարվել են, իսկ 26-ը՝ մերժվել:

- 2019 թվականի ընթացքում մշակվել և ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1241-Ն որոշումը և 2019 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 399-Ն որոշումը, որոնք արդեն իսկ մտել են ուժի մեջ, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 3-ի «Ընտրանքային ուսումնասիրության կարգը սահմանելու մասին» N 58-Ն հրամանը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հունվարի 23-ի «Առողջապահության բնագավառում լիցենզիա ստացած անձանց տրամադրվող ծանուցման թերթիկի ձևերը հաստատելու մասին» N90-Ա հրամանը և ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 12-ի «Առողջապահության բնագավառում լիցենզիա ստացած անձանց տրամադրվող ծանուցման թերթիկների ձևերը հաստատու մասին» N 1556-Լ հրամանը:

Առողջապահության ոլորտի պեղական ֆինանսավորման և բյուջեից հատկացվող գումարների ծախսման արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝

- 2019թ. Առողջապահության նախարարությունը նախաձեռնել է ինչպես մարզային, այնպես էլ Երևան քաղաքի բժշկական կազմակերպությունների արդիականացման, վերազինման, հիմնանորոգման քաղաքականության իրականացում: 2019թ. ընթացքում Առողջապահության նախարարության կողմից իրականացված գնման ընթացակարգերի շրջանակներում ձեռք են բերվել բժշկական ժամանակակից սարքավորումներ՝ Կոտայքի մարզի «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համար՝ բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը և հասանելիությունը բարձացնելու նպատակով:

- 2019թ. ընթացքում Առողջապահության նախարարության կողմից իրականացվել է «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու աշխատանքները:

- 2019թվականին վերանայվել է ուռուցքաբանական վիրահատական ծառայությունների մասով համավճարային սկզբունքը, հաստատվել են նոր պետական պատվերով փոխհատուցվող ծառայությունների գներ՝ հավասարեցնելով դրանք սոց.փաթեթի շահառուների համար սահմանված գներին:

- 2019 թվականի տարվա ընթացքում ուռուցքաբանական վիրահատական ծառայությունների գները ավելացվել է ևս 20-25%-ով:

- հաստատված չարորակ ուռուցքաբանական և արյունաբանական ախտորոշումներով տառապող հիվանդների համար ճառագայթային բուժումը ներխոռոչային սարքերով, TERAGAM ճառագայթային սարքով և ELEKTA էլեկտրոնային արագացուցիչով՝ իրականացվում է ամբողջությամբ պետական պատվերի շրջանակներում՝ անկախ հիվանդի սոցիալական կարգավիճակից նախկին համավճարային սկզբունքի փոխարեն:

- առողջապահության նախարարի հրամանով բարձացվել է պետության կողմից փոխհատուցվող ճառագայթային բուժման գները՝ մեկ սեանսի համար 3550 ՀՀ դրամից դարձել է TERAGAM ճառագայթային սարքով բուժման դեպքում՝ 9500 ՀՀ դրամ, իսկ ELEKTA էլեկտրոնային արագացուցիչով՝ 13500 ՀՀ դրամ, ներխոռոչային բուժումը՝ 9000-ից դարձել է 18800 ՀՀ դրամ:

- հաստատվել է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում գլխուղեղի սուր և/կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիա ծառայությունների կազմակերպման և ուղղաթիռով պացիենտների տեղափոխման կազմակերպման ծրագրերով իրականացվող ծառայությունները և գները:

- ընդլայնվել է նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող ծառայություններից օգտվող շահառուների շրջանակը, վերանայվել ու հաստատվել են ծառայությունների գները:

- վերանայվել է շտապ բժշկական օգնության նորմատիվները և գները, որի արդյունքում հերթապահող բրիգադների քանակը ավելացվել է՝ ապահովելով ծառայության հասանելիությունը:

- մինչև 7 տարեկան երեխաների շահառուների խումբը ընդլայնվել է մինչև 18 տարեկան:

- ընդլայնվել է դեպքերի անհատական վարումով կազմակերպվող ծրագրերի քանակը:

- վերանայվել և բարձացվել է մանկաբարձական՝ ծննդօգնության ծառայությունների գները շուրջ 25%-ով:

- մշակվել, հաստատվել և իրականացվել է պետական պատվերի շրջանակներում էլեկտրոնային ուղեդրման և հերթագրման պիլոտային ծրագիրը:

- Ավելացել են առողջության առաջնային պահպանման մեկ բնակչի համար միջինացված գները, որի արդյունքում բարձրացվել է առաջնային օղակի բուժաշխատողների աշխատավարձը՝ 10-15%-ով:

- Սոցիալական փաթեթի առողջապահության բաղադրիչի շահառուների բազայում ներառվել են բուժաշխատողների նոր խմբեր (շտապօգնության ծառայության, արյան կայանի աշխատողներ)՝ 620 անձ:

Միասնական էլեկտրոնային առողջապահական տեղեկատվական համակարգի (E-HEALTH) ներդրման ուղղությամբ՝

- իրականացվել են դասընթացներ թվով 2018 բժշկի համար,
- բարելավվել և զարգացվել են տվյալների մուտքագրման բաժինները,
- իրականացվել է էլեկտրոնային դեղատոմսի փորձարկում, որի արդյունքների հիման վրա բարելավվել է էլեկտրոնային դեղատոմսը,
- բաշխվել են 2420 համակարգիչներ,
- ավարտվել է լակատրոների և ԱՐՄԵԴ-ի ինտեգրումը,
- բարելավվել է հղիների հսկման մոդուլը,
- ներդրվել է վերակենդանացման բաժանմունքների ազատ մահճակալների ցուցադրման և շտապօգնության ծառայությանը փոխանցման մոդուլը,
- բարելավվել է [www.armed.am\govlimits](http://www.armed.am/govlimits) էջը, ցուցադրվում է պետական պատվերի գումարների բաշխվածությունը:

Միջազգային համագործակցության ուղղությամբ՝

- 2019 թվականի ընթացքում ստորագրվել է առողջապահության բնագավառում օտարերկրյա պետության հետ համագործակցության 1 միջգերատեսչական համաձայնագիր, 9 փոխըմբռնման հուշագիր: Դիվանագիտական խողովակով օտարերկրյա պետություններ ու միջազգային կառույցներ են ներկայացվել են մոտ մեկ տասնյակ երկկողմ համագործակցության համաձայնագրերի նախագծեր, զարգացման ծրագրեր, առաջարկներ: Ներպետական համաձայնեցման փուլ են անցել ԱՊՀ մի շարք համաձայնագրերի և արձանագրությունների նախագծեր:
- Երևանում կազմակերպվել են հայ-ռուսական առողջապահական 5-րդ համաժողովը, հակամիկրոբային դեղերի կայունության դեմ պայքարի ռազմավարության մշակման հարցերով ԱՊՀ անդամ-պետությունների աշխատանքային խմբի առաջին նիստը: Հայաստան են ժամանել ԱՀԿ ներկայացուցիչներ և փորձագետներ, սփյուռքահայ բժիշկներ և բժշկական խմբեր: Կայացել են 5 տասնյակից ավելի հանդիպումներ՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:
- Իրականացվել են ՀՀ առողջապահության նախարարի, նախարարի տեղակալների՝ արտասահման աշխատանքային այցեր: Նախարարությունն ակտիվորեն մասնակցել է մի շարք օտարերկրյա պետությունների հետ համագործակցության միջկառավարական հանձնաժողովների նիստերին, ՄԱԿ-ի, միջազգային ու օտարերկրյա այլ կառույցների հետ տարվող աշխատանքներին: